ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2020/182

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Մասնակից՝ «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝ Կառլեն Ռուստամյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՏԿԵՆ-ԳՀԱՊՁԲ-2020/3» ծածկագրով գնանշման հարցում, համակարգչային սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11052-2020 գրությամբ «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 21.07.2020թ.-ի թիվ ՀԲ//20356-2020 գրության հիման վրա, 23.07.2020թ.-ին «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 23.07.2020թ.-ին

Բողոքներ քննող անձի 24.07.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/182 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

30.07.2020թ.-ին և 07.08.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 30.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.08.2020թ.-ին:

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը 21.07.2020թ.-ի թիվ ՀԲ//20356-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է թիվ ՏԿԵՆ-ԳՀԱՊՁԲ-2020/3 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին Կառլեն Սուրենի Ռուստամյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում՝ 2-րդ չափաբաժնի մասով լրացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում /Հավելված 1.1/, արձանագրվել էին անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:

29.06.2020թ.-ին գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է, Կառլեն Սուրենի Ռուստամյան Ա/Ձ-ին ծանուցվել է անհամապատասխանությունների շտկման մասին, սակայն սահմանված ժամկետում մասնակցի կողմից անհամապատասխանությունները չեն շտկվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը սահմանված կարգով ընթացք տալ՝ մասնակցին ընդգրկելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (ա) ենթակետը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՏԿԵՆ-ԳՀԱՊՁԲ-2020/3» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 24.07.2020թ.-ի գրությամբ դիմել է «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11052-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին նաև ներկայացրել է գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

«2020թ. Հունիսի 13-ին Կառլեն Սուրենի Ռուստամյան Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝ Ա/Ձ) մասնակցել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) հայտարարած "Դյուրակիր համակարգիչների" մատակարարման ՏԿԵՆ-ԳՀԱՊՁԲ- 2020/3 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ):

2020թ. հուլիսի 3-ին Պատվիրատուի գնումների համակարգողը հեռախոսազանգի միջոցով տեղեկացնում է Կառլեն Սուրենի Ռուստամյան-ին, թե իբրև Ա/Ձ-ն խախտել է

հայտով ստանձնած պարտավորությունը՝ ծանուցել են հավելված 1.1-ում առկա անհամապատասխանությունը (առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը հավելվածում նշված չի եղել) շտկելու վերաբերյալ, և մեկ աշխատանքային օրում Ա/Ձ-ն չի շտկել անհամապատասխանությունը և Պատվիրատուն նախաձեռնում է պաշտոնական ընթացակարգ Ա/Ձ-ին Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Այս մասին Ա/Ձ-ն տեղեկանալուց հետո անմիջապես շտկված հավելված 1.1-ը (կցվում է) ուղարկում է Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային հասցեին (կցվում է էլեկտրոնային հասցեից ուղարկված լինելու մասին արտատպումը): Ապա Ա/Ձ-ն ստուգելով իր պաշտոնական էլեկտրոնային հասցեն տեսնում է որ 2020թ-ի հունիսի 29-ին Պատվիրատուի գնումների համակարգողի էլեկտրոնային հասցեից ստացվել է ծանուցումը, սակայն այն հայտնվել է Ա/Ձ-ի էլեկտրոնային հասցեի ՍՊԱՄ-ում, որի արդյունքում պարզ է որ Ա/Ձ-ն չի ստացել ծանուցումը պատշաճ կերպով, նշենք նաև, որ ծանուցումը ստանալու դեպքում Ա/Ձ-ն կհաստատեր այն՝ ծանուցելով Պատվիրատուին դրա մասին:

Այնուհետև, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է Կառլեն Սուրենի Ռուստամյան Ա/Ձ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

“Գնումների մասին” ՀՀ օրենքի (այսուհետևնա՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի “ա” ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք, 2020թ. հուլիսի 3-ին Կառլեն Սուրենի Ռուստամյան Ա/Ձ-ն շտկել է անհամապատասխանությունը միայն հեռախոսազանգի միջոցով տեղեկանալուց հետո, քանի որ Պատվիրատուն ոչ միայն պատշաճ ձևով չի ծանուցել

(Պատվիրատուն չի ստացել որևէ հատատում մասնակիցների կողմից որ ծանուցումները ստացվել են) այլ նաև որևէ հանձնաժողովի նիստի արձանագրություն չի հրապարակել մինչև անգամ հուլիսի 3-ը, երբ հեռախոսազանգով տեղեկացրել է Ա/Ձ-ին: gnumner.am կայքի հրապարակումներից կարող ենք տեսնել որ Պատվիրատուի առաջին հրապարակված արձանագրությունը (հայտերի բացման նիստի) հրապարակվել է հուլիսի 8-ին, իսկ նիստը տեղի է ունեցել հուլիսի 7-ին: Ստացվում է, որ գնումները համակարգողը մինչև հայտերի բացման նիստի օրը՝ հուլիսի 7-ը, մասնակիցների հետ իրականացրել է ինչ որ անիմաստ բանակցություններ, շտկման օրեր է նշանակել և որոշումներ կայացրել մասնակիցների համար, ապա հուլիսի 7-ին տեղի է ունեցել առաջին հայտերի բացման նիստը:

Եվ այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքների վրա, այն է.

Ա/Ձ-ն մինչև հուլիս 3-ը որևէ կերպ չէր կարող տեղյակ լինել հանձնաժողովի գործողությունների մասին, քանի որ Ա/Ձ-ի պաշտոնական էլեկտրոնային հասցեին չի ստացվել հանձնաժողովի նիստի արձանագրություն կամ ծանուցում, արձանագրությունը հրապարակվել է միայն հուլիսի 8-ին, որտեղ արդեն որոշել էին Ա/Ձ-ի հայտը մերժելու մասին:

Ա/Ձ-ն այդ ընթացակարգում անկախ ամեն ինչից ի սկզբանե չի եղել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, որպեսզի դիտարկվի Ա/Ձ-ի ընթացակարգում հետագա մասնակցությունից խուսափելու հարցը, ընդամենը տեխնիկական վրիպակի պատճառով հավելված 1.1-ում չի նշվել առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը, որը առաջին իսկ հնարավորության դեպքում շտկվել է:

Որպես լրացուցիչ փաստական հանգամանք՝ նշենք, որ հուլիսի 3-ին հայտի շտկումից անմիջապես հետո գնումների համակարգողի էլեկտրոնային հասցեին ուղարկվել է նաև այն արտապումը Ա/Ձ-ի էլեկտրոնային հասցեից, առ այն, որ վկայում է Պատվիրատուի ծանուցումը ՍՊԱՄ-ում հայտնվելու մասին (կցվում է), սակայն այդ ամենը Պատվիրատուն հաշվի չի առել և հուլիսի 7-ին հրավիրել է իր առաջին հայտերի բացման և գնահատման նիստը:

Արդյունքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ընթացակարգի պահպանման ոչ պատշաճ կատարման, թույլ տված անգործության արդյունքում Կառլեն Սուրենի Ռուստամյան Ա/Ձ-ն հայտնվել է

“Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում” ներառվելու վտանգի առջև:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2020/182 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով 08.06.2020թ.-ին հայտարարվել է «ՏԿԵՆ-ԳՀԱՊՁԲ-2020/3» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՏԿԵՆ-ԳՀԱՊՁԲ-2020/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.07.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ հավելված 1.1-ում լրացված չի եղել առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը, չափաբաժնի համարը այլ է նշվել, ինչպես նաև ֆիրմային անվանումը դաշտում նշված է եղել չափաբաժնի անվանումը և բացակայել է մալուխների առկայության մասին տեղեկատվությունը:

v. Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ-ն սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը մերժել է Մասնակցի հայտը:

vii. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 21.07.2020թ.-ի թիվ ՀԲ//20356-2020 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11052-2020 գրությամբ «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ

կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունի կողմից համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով 08.06.2020թ.-ին հայտարարված «ՏԿԵՆ-ԳՀԱՊՁԲ-2020/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին և Հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետի դրույթներով, որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը 07.07.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրել է, որ «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ-ն սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը մերժել է Մասնակցի հայտը:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 07.07.2020թ.-ին՝ Մասնակցի հայտի հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով, սակայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 21.07.2020թ.-ի թիվ ՀԲ//20356-2020 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից,

ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-*

Հայաստան բանկ» Ա/Ձ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11052-2020 գրությամբ «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/182 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**